

**ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱԾ ԿԱՆԱՆՑ
ՊԱՏԺԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենք) հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է պատիժ, որի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանվում են հանցագործություն կատարած կանանց պատժի առանձնահատկությունները: Այսպես.

Նույն օրենսգրքի ընդհանուր դրույթներով սահմանվում է, որ հանցանք կատարելու կամ պատիժ նշանակելու պահին հանցավորի հղիությունը կամ պատիժ նշանակելու պահին հանցավորի խնամքի տակ մինչև տասնչորս տարեկան երեխայի առկայությունը պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ են: Հղի կանանց նկատմամբ որպես պատիժ չի կարող նշանակվել հանրային աշխատանքներ: Կալանքը չի նշանակվում դատավճիռը կայացնելու պահին հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ, ինչպես նաև ցմահ ազատազրկման չեն կարող դատապարտվել հանցանք կատարելու կամ դատավճիռ կայացնելու պահին հղի վիճակում գտնվող կանայք:

Ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ դատական որոշման կատարումը որոշում կայացրած դատարանը կարող է հետաձգել դատական որոշման կատարման պահին՝ դատապարտյալի հղիության դեպքում՝ մեկ տարուց ոչ ավելի ժամանակով կամ դատապարտված կնոջ փոքրահասակ երեխաների առկայության դեպքում՝ մինչև երեխայի երեք տարեկան դառնալը:

Եթե կին դատապարտյալը որպես պատիժ նշանակված հանրային աշխատանքների կատարման ժամանակահատվածում հղիանում է, ապա ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ դատապարտյալին պատժից ազատելու կամ պատժի կրումը հետաձգելու նպատակով:

Հղի, կերակրող մայր, անչափահաս կամ հիվանդ դատապարտյալն ապահովվում է հավելյալ սննդով, որի չափաբաժինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ուղղիչ հիմնարկում անհրաժեշտության դեպքում կարող է ստեղծվել մանկատուն՝ երեխաների բնակության և զարգացման պատշաճ պայմաններով: Դատապարտյալն ուղղիչ հիմնարկի մանկատանը կարող է տեղավորել իր՝ մինչև երեք տարեկան երեխային և աշխատանքից ազատ ժամերին, առանց սահմանափակման, շփվել նրա հետ: Դատապարտյալին կարող է թույլատրվել երեխայի հետ համատեղ բնակություն: Ուղղիչ հիմնարկի մանկատանը երեխա ունեցող, կերակրող մայր, հղի, նախածննդյան կամ հետծննդյան ժամանակահատվածում գտնվող դատապարտյալը պատժախուց չի տեղափոխվում:

Ուղղիչ հիմնարկին կից մանկատանը պահվող երեխայի երեք տարին լրանալուց հետո ուղղիչ հիմնարկի պետը կարող է մանկատանը երեխային պահելու ժամկետը երկարաձգել մինչև ծնողի պատժի ժամկետի ավարտը, եթե պատիժը կրելուն մնացել է երկու տարուց ոչ ավելի ժամանակ:

Վերը նշված իրավակարգավորումներից հասկանում ենք, որ ինչպես իգական, այնպես էլ արական սեռի հանցավորները կարող են Օրենքով սահմանված տարիքի երեխա ունենալ իրենց խնամքի տակ, հետևաբար կանանց նկատմամբ կիրառվող պատիժների դեպքում միակ վերապահումը հղիության փաստն է:

Հաշվի առնելով հանցանք կատարած կանանց ֆիզիոլոգիական վիճակը (հղիությունը) և երեխաների գոյության փաստը Օրենքով համեմատ մեղմ և

մարդասիրական վերաբերմունք է նախատեսվում պատժի ընտրության և կիրառման հարցում՝ դրանով նպաստելով մայրության և մանկության պաշտպանության՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված սկզբունքի իրագործմանը:

Մարինե Ֆարմանյան

ՀՀ փաստաբանների պալատի

Երիտասարդական խորհուրդ